«Գիւղը ապրում է սովի ճիրաններում, գրում էին Վերին-Ղարանլուխից «Հայաստանի Աշխատաւոր»-ին (25 ապր.)։ Սրանից մի քանի օր առաջ մի գաղթական սովածութիւնից մեռաւ տեղացի Խաչատուրի դռանը։ Շատերը, տեղացի թէ գաղթական, հապճեպ փախչում են էս կողմն-էն կողմը, որպէսզի մի կտոր չոր հաց ճարեն։ Սրանից 3 օր առաջ 3 հոգի գաղթական սովածութիւնից ճանապարհին մեռել են, այնպէս որ սովը հնձում է։ Գիւղում ապրում է 1000—1200 շունչ գաղթական, իսկ բնակիչ գիւղացիք 2300 շունչ են։ Հացի գինը բարձրացել է՝ 1 փութ ցորենը 300—400 ռուբլու, գարին՝ 200ռ., ձուն հատը 1ռ. 20կ., միւս մթերքները կրկնապատիկ և եռապատիկ գին են ստացել, այն էլ ձեռք չի բերւում»։

Նոր-Բայազէտի Քէօլաղուան գիւղից հեռագրում էին նոյն թերթին (27 ապր.). «Ժողովուրդը ապրում է սոսկալի պայմաններում։ Սովամահութեան դէպքերը տասնեակների են հասնում. օր օրի վրա սաստկանում է։ Խնդրում ենք հաց։ Ի սէր Աստծոյ, մի՛ թողէք մեռնենք»։

«Ախտայի շրջանի տեղացի և փախստական հայութիւնը ծայր աստիճանի սոված է, հեռագրում էին Ներքին-Ախտայից, անհամար դիմումներ կը լինեն։ Սովամահութեան դէպքերը բազմաթիւ են։ Եթէ անմիջապէս նպաստ և սերմացու չհասնի, ուշ կը լինի»։

Քեշիշքեանդից գրում էին նոյն թերթին (9 մայիս). «Սոսկալի տեսարաններ... Գաղթականութիւնը նորից գաղթի ճանապարհը բռնած՝ չւում է դէպի Երևան։ Մերկ, ոտաբոբիկ կամ դանդաղ ցնցոտիներով իր այլանդակ մարմնի մի մասը ծածկած և ծանրաբեռնուած իր փոքրիկներով՝ գիւղից-գիւղ թափառում, հաց է մուրում, բայց հաց չի գտնում։ Հացի փոխարէն կանաչով սնուող գաղթականութեան մէջ յաճախ թունաւորման դէպքեր են պատահում և կամ դժուածի նման թափառում են փողոցները՝ անկապ և կցկտուր խօսքեր արտասանելով։ Շրջանիս գաղթականութեան մի մասը դեռ մինչև օրս էլ բացօդեայ է անցկացնում իր օրերը ձիւնի, անձրևի տակ և ցեխերի մէջ։ Լինում են դէպքեր, որ սոված, ուժասպառ եղած գաղթականները թաղւում են ցեխերի մէջ և առանց կողմնակի օգնութեան չեն կարողանում ազատուել այդ դրութիւնից։ Աւելի սոսկալի և անելանելի դրութեան մէջ գտնուողների մեծ տոկոսը կազմում է Նախիջևանի ժողովուրդը... Սովն ու ցաւը մէջք մէջքի տուած հնձում են 17,000 խեղճ գաղթականութիւնը... Պատահում են, յաճախ, մեռելներ, որոնք 6—7 օրով մնում են գոմերի մէջ, առանց թաղելու»։

«Կողբը սովի ճարակ է դարձել, ճչում էին աղահանքից («Հ. Աշխ.» 21 մայիս)։ Հացի գրւանքան 15ռ. է։ Նպաստ չստանալու պատճառով սովից մեռնում են օրական 20 մարդ։ Օգնեցէ՛ք մեզ»։

Ժողովուրդը սովամահութիւնից բնաջնջւեց, նորից աղաղակում էին Ներքին-Ախտայից։ Կմախքացած մարդիկ խոտ են ճարակում, սատկած լեշեր ուտում գիւղերում։ Հարիւրաւորներ մեռնում են։ Շրջանը ձեռքից գնաց»։

«Քէօսամահմատ գիւղի մեծ մասը, հեռագրում էին մայիս 19-ին Նոր-Բայազէտից, կանաչով է կերակրւում։ Կանայք և երեխաները նման են ուրւականների։ Ի սէր Աստծոյ, փրկեցէ՛ք մեզ մեռնելուց. հաց հասցրէք»։

«Գաւառի և քաղաքի ազգաբնակութեան վիճակը անտանելի է, հաղորդում էր Հայ.Հեռ.Գործակալութիւնը մայիս 20-ին։ Սովամահութեան դէպքեր են եղել։ Ամերիկեան կոմիտէն 10 օրից ի վեր ոչինչ չի ստանում։ Ալիւր չլինելու պատճառով ի զուր է մօտ ապագայում ամերիկացիներից որև է օգնութիւն սպասել»։

Եւ այսպէս անվերջ ու ամէն կողմից։